

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/2
19 հուլիսի 2011թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) 12.07.2011թ-ի նիստում քննության է առնվել <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ՍՊԸ 22.06.2011թ-ի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՅՎ 16.06.2011թ. թիվ 1000024 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՅՎ 16.06.2011թ. թիվ 1000024 ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.05.2011թ. թիվ 1000024 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում 16.06.2011թ. կազմվել է թիվ 1000024 ստուգման ակտը /այսուհետ նաև ստուգման ակտ/, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 102.113.624 դրամ: Մասնավորապես, ստուգման ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ համաձայն ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության ավագ քննիչ Գ.Մնոյանի 19.04.2011թ. որոշման և 01.06.2011թ. թիվ 7/1-106 կգ գրության, <Հ.Ռ.-Ա.Ա.Ա> ՍՊԸ-ի ստուգմամբ պարզվեց, որ ընկերությունը Երևանի քաղաքապետարանի 04.03.03թ-ի թիվ 410-Ա որոշմամբ ձեռք է բերել 4.5 հա մակերեսով հողամաս, որի արժեքը կազմել է 65.907.900 դրամ: Հետագայում Երևանի քաղաքապետարանի 11.06.03թ. թիվ 1282-Ա որոշմամբ լրացուցիչ հատկացվել է ևս 4.5 հա մակերեսով հողամաս՝ 65.907.900 դրամ արժեքով: Ընդհանուր հողակտորը կազմել է 9 հա, որի դիմաց վճարվել է ընդամենը 131.815.800 դրամ: Ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ ընկերությունը 2008թ-ի հուլիսի 9-ին թիվ 01 և թիվ 02 հաշիվ-ֆակտուրայով իրացրել է ք.Երևան, Կ.Ուլնեցու փ., թիվ 32/11 և թիվ 32/12 հասցեում գտնվող հողամասը, յուրաքանչյուրը 0.1 հա մակերեսով, ընդամենը 0.2 հա: Նշված հողամասն ընկերությունը վաճառել է ՀՀ քաղաքացի Սուրիկ Սերգեյի Խաչատրյանին, ընդհանուր գումարը կազմել է 39.600.000 դրամ, որի ԱԱՀ-ն՝ 6.600.000 դրամ: Նշված գործարքը կատարվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա Օ9.07.2008թ. նոտարական վավերացմամբ: Սակայն, ըստ քննչական նյութերի պարզվեց, որ գնորդ Սուրիկ Սերգեյի Խաչատրյանը նշված 0.2 հա հողամասի դիմաց վճարել է 500.000 ԱՄՆ դոլար, որն ըստ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքի կազմում է 151.875.000 ՀՀ դրամ (1 դոլարը = 303.75 դրամ): Ելնելով վերոգրյալից համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՅՎ պետի 14.06.2011թ. թիվ 143-4 որոշման հարկերի հաշվարկման համար կիրառվել է <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 1998թ-ի սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի գ) ենթակետի դրույթները: Այսպիսով 2008թ-ի համար ներկայացված շահութահարկի հաշվարկի և կատարված ստուգման համադրումից պարզվեց, որ հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել 118.875.000 դրամով (151875000-33000000), որից համաձայն <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի հաշվարկվում է լրացուցիչ շահութահարկ 20% դրույքաչափով, գումարով 23.775.000 դրամ:

Համաձայն <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների ընդամենը 2008թ-ի շահութահարկի մասով ենթակա է լրացուցիչ վճարման բյուջե 51.056.812 դրամ:

Ստուգման ակտի 5-րդ կետով արձանագրվել է, որ համաձայն ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության ավագ քննիչ Գ.Մնոյանի 19.04.2011թ. որոշման և 01.06.2011թ. թիվ 7/1-106 կգ գրության, <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ՍՊԸ-ի

ստուգմամբ պարզվեց, որ ընկերությունը 2008թ–ի 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը պակաս է ցույց տվել 151.875.000 դրամ, որի ԱԱՀ-ն կազմում է 23.775.000դրամ:

Ղեկավարվելով <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի, <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածների դրույթներով ընդամենը ԱԱՀ-ի գծով ենթակա է վճարման բյուջե 51.056.812 դրամ: Հարկերի հաշվարկման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՅՎ պետի 14.06.2011թ. թիվ 143-4 որոշումը և <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 1998թ–ի սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի գ) ենթակետը:

<Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է հետևյալը.

ՀՀ ոստիկանության ԶԳՎ ՀԿԳ քննության վարչությունում քննվող թիվ 69106110 քրեական գործի շրջանակներում Ընկերության գործունեության ընթացքում պետ. բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրման հետ կապված քննությանը հետաքրքրող հարցերի պարզաբանման համար, համաձայն ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի և 84-րդ հոդվածի, նշանակվել է մասնագիտական ստուգում, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան մասնագետներին: Ստուգումն իրականացնելիս հարկային մարմինը ղեկավարվել է <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1998թ–ի սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշումով և ՀՀ ոստիկանության ԶԳՎ ՀԿԳ քննության վարչության գրությունով, ինչպես նաև գրությանը կից ներկայացված ՀՀ քաղաքացի Սուրիկ Խաչատրյանի նախաքննական ցուցմունքներով:

Ընկերության գործունեության հետ կապված ստուգման հարկային մարմինների տեսանկյունից խախտման առարկա են հանդիսացել 2008 թվականի հուլիսի իննիս <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ԱՊԸ-ի՝ ի դեմս տնօրեն Արթուր Էդվարդի Կետիկյանի և Սուրիկ Խաչատրյանի լիազորված անձ Վարդան Դավթյանի միջև կնքված Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերով (գրանցված սեղանամատյանում՝ 7257 և 7258 համարների տակ) հողի առուվաճառքի գործարքները: Համաձայն կնքված Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի՝ Սուրիկ Խաչատրյանը՝ ի դեմս լիազորված անձ Վարդան Դավթյանի, ձեռք է բերել ք.Երևան, Կ.Ուլնեցու փողոցի թիվ 32/12 և 32/11 հասցեներում գտնվող և <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար 0.1 հա (սեփ. վկայ. թիվ 2504808, տրված 08.11.2007թ.) և 0.1 հա (սեփ. վկայ. թիվ 2504807, տրված 08.11.2007թ.) հողամասերը: Համաձայն կողմերի միջև կնքված առուվաճառքի պայմանագրերի 4-րդ կետերի՝ հողամասերից յուրաքանչյուրի գինը սահմանվել է 19.800.000 ՀՀ դրամ՝ ներառյալ 3.300.000 ՀՀ դրամ ՍԱՀ, ընդհանուր՝ 39.600.000 ՀՀ դրամ՝ ներառյալ 6.600.000 ՀՀ դրամ ԱԱՀ: Սակայն հարկային մարմինը, հիմք ընդունելով նախաքննության մարմնի (քննչական մարմնի) գրությունը, և գրությանը կից ներկայացված <քաղաքացի Սուրիկ Խաչատրյանի նախաքննական ցուցմունքները, ենթադրել է, որ <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ԱՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Արթուր Էդվարդի Կետիկյանի հիշյալ հողամասերը Աուրիկ Խաչատրյանին է վաճառել ոչ թե ընդհանուր՝ 39.600.000 ՀՀ դրամով, այլ 500.000 ԱՍՆ դոլարով: Հարկային մարմինը, խախտելով ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածը՝ համաձայն որի հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով և 91-րդ հոդվածը, համաձայն որի ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրեն վերապահել է դատարանի ֆունկցիաներ, առանց բավարար հիմքերի եզրակացրել, որ իրականում Սուրիկ Խաչատրյանի նախաքննական ցուցմունքները հանդիսանում են բավարար ապացույցներ և առանց <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ԱՊԸ-ի տնօրեն Արթուր Կետիկյանի բացատրությունները լսելու (ինչը հակասում է <Հարկերի

մասին> ՀՀ օրենքի 19-րդ, և 20-րդ հոդվածների դրույթներին), հիմք է ընդունել, որ <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Կետիկյանը հիշյալ հողամասերը Սուրիկ Խաչատրյանին (ով իրականում գործարքը կնքել է ներկայացուցչի միջոցով) վաճառել է 500.000 ԱՄՆ դոլարով, որը ըստ հարկային մարմնի ստուգման ակտում նշված ելակետային տվյալների համարժեք է 151.875.000 դրամի (1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը 303.75 դրամ): Հարկային մարմինը, սխալ կիրառելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 1998թ-ի սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշումը, <որոշել է>, որ <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ԱՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Արթուր Կետիկյանի, հարկվող շահույթը պակաս է ցույց տվել 118.875.000 ՀՀ դրամի չափով (151.875.000-33.000.000), Արթուր Կետիկյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով սահմանված հանցագործության կատարման մեջ: Միաժամանակ հարկային մարմինը, <հիմք ընդունելով <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Կետիկյանի կողմից նշված հանցանքը կատարելու փաստը> և ղեկավարվելով <Հարկերի մասին>, <Ավելացված արժեքի հարկի մասին>, <Շահութահարկի մասին> համապատասխան օրենքներով, ստուգման ակտով <Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ԱՊԸ-ին է առաջադրել վճարելու 102.113.624 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով հարկային մարմնի ստուգման ակտի բողոքարկման համար ներկայացված բավարար հիմքերը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի պահանջներով, ընկերությունը խնդրում է բողոքը քնության առնել գանգատարկման հանձնաժողովում և անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ կողմից 2011թ. հունիսի 16-ի թիվ 1000024 ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ՔԳՎ ՀԿԳ քննության ավագ քննիչ Գ.Մնոյանի վարույթում գտնվող քրեական գործով ձեռք բերված ապացույցներով բավարար կերպով հիմնավորվել է ստուգման ակտում նշված հողակտորներն ընկերության կողմից Սուրիկ Խաչատրյանին 500.000 ԱՄՆ դոլարով վաճառվելու հանգամանքը: Մասնավորապես, Սուրիկ Խաչատրյանը քրեական գործի քննության ընթացքում տված ցուցմունքում նշել է, որ ընկերության տնօրեն Արթուր Կետիկյանը վերը նշված երկու հազար քառասուկուսի մետր ընդհանուր մակերեսով հողակտորների սեփականության իրավունքը փոխանցել է իրեն: Որից հետո Սուրիկ Խաչատրյանն արդեն իսկ իր անվամբ ձևակերպված հողակտորները գրավադրել է բանկում, որի դիմաց բանկի կողմից տրամադրված 500.000 ԱՄՆ դոլարը փոխանցվել է Արթուր Կետիկյանին:

Հաշվի առնելով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է վերը նշված հողակտորներն ընկերությանը 500.000 ԱՄՆ դոլարով վաճառվելու հանգամանքը, ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ պետի 14.06.2011թ. թիվ 143-4 որոշումը կիրառել են <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 1998թ-ի սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի գ) ենթակետի դրույթները, անուղղակի եղանակով հաշվարկել են ընկերության հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը:

<Հ.Ռ.-Ա.Ա.Ա.> ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀԿ 16.06.2011թ. թիվ 1000024 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված 22.06.2011թ-ի դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:
Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ